Ավետիք Իսահակյան

Ամեն անգամ, երբ նայում եմ

Ամեն անգամ, երբ նայում եմ
երեխայիս խաղերին,
Թե ինչ սիրով փարվել է նա
քարին, ջրին ու հողին, -

Խոսք եմ խոսում իմ սրտի հետ.

- Է՜յ իմաստուն մանկություն,
Ունայն բան է խելքը մարդուս
և գործերը մեծանուն:
Դատարկ ձայնէ քաջի համբավ,
գանձ ու պատիվ հանապազ,
Դո'ւ ես ոսկին, ո՜վ մանկություն,
դո'ւ իսկական լույս – երազ:
Ա՜խ, երնեկ թե մանկությունը
հանկարծ դառնար գար նորեն,
Գլխիս վառվեր մանկուք օրվա
արեգակը ոսկեղեն:
Անուշ մորը ոտների տակ
թռվռայի, խաղայի,
Փառք ու հանճար չարժեն խաղին
մի ծաղկաբույր տղայի:
Իմ սո'ւրբ մանկիկ, թո'ղ համբուրեմ

թաթիկներդ ցեխոտած,
Դու՝ կյանք ու սե՛ր, ծափ ու ծիծա՛ղ,
ուրախության դո՛ւ աստված…

1917
Ժընև